#ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 2, ՄԱՐՏ 2021

ԱՐԵԳՆԱԶԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԻԴԵՈԲԼՈԳ

Արեգնազան կրթահամալիր

Կրթահամալիրում դասերը սկսվելուն պես, ավագ դպրոցի աշակերտներին ներկայացվել է Փաստերի ստուգման լաբորատորիայի նպատակը՝ տալ աշատերտներին մեդիագրագիտության և փաստերի ստուգման հմտություններ, ծանոթացնել փաստերի ստուգման լայն գործիքակազմին և սովորեցնել ինքնուրույն աշխատել, հետազոտություն անել և պատրաստի նույթ ստեղծել:

Աշակերտներին աշխատանքների ներգրավելու ընտրության միակ սկզբունքը եղել է նրանց իսկ ցանկությունը: Աշխատանքներում ընդգրկվել են 10-րդ դասարանցիները: Հանդիպումները տեղի են ունենում հիմանականում առցանց, շաբաթական երկու անգամ:

Տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համատեղ իրականացվող «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակներիի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՏԱՍՆԵՐՈՐԴՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Արեգնազան կրթահամալիրում Փաստերի ստուգման լաբորատիրայի աշխատանքներում ներգրավված են տասներորդցի աշակերտներ: Աշխատանքները բաղկացած են երեք հիմնական բաղադրիչից՝

- տեսական գիտելիքի փոխանցում,
- վարժանք,
- ինքնուրույն ուսումնասիրություն և նյութի ստեղծում:

Տեսական մասում աշակերտները ծանոթանում են տարբեր գործիքների հետ, աշխատում են որոնողական համակարգերում, պաշտոնական տեղեկատվական հարթակներ և այլ:

Այնուհետև, վարժում են ստացած տեսական գիտելիքը: Վարժանքի համար ծանոթանում են հայկական մեդիադաշտում տեղ գտած արդեն իսկ ստուգված նյութերին. հասկանալ, ինչպես են աշխատում մեդիափորձագետները, օրինակները՝ media.am, fip.am hetq.am և այլ կայքերից են վերցվում:

Երրորդ փուլով աշակերտները փորձում են գտնել նոր նյութեր կամ իրենց տրվում է կասկածելի նյութ, որը իրենք արդեն ինքնուրույն են ստուգում, փնտրում են տեղեկություններ, հերքում կամ հաստատում են նյութում բերված փաստերը՝ օգտագործելով իրենց ծանոթ տարբեր գործիքներ:

Դասավանդող՝
Սիրանուշ Կասպարովա

Հիմնական խումբ.

- Սոնակ Կարապետյան
- Մանե Յահյեյան
- Սոնա Կարապետյան
- Մարիա Խաչատրյան

Բացի հիմնական խմբի անդամներից, տասներորդցիներից մի քանիսը ժամանակ առ ժամանակ մասնակցում են լաբորատորիայի աշխատանքներին և փորձագետների հետ հանդիպումներին:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

Լուսանկարների սկզբնաղբյուրը հայտնաբերելու բաժինները որոնողական համակարգերում

- images.google.com
- www.bing.com/images/
- yandex.ru/images/
- www.tineye.com

ԱՐԱՐԱՏԻ ԼԱՆՋԻՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՎԵՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՂԾ ԵՆ

Փետրվարի 13-ին, ժամը 15:29-ին Երևան քաղաքից 8 կմ հարավ-արևելք գրանցվել է երկրաշարժ՝ օջախի 10 կմ խորությամբ, 4.7 մագնիտուդով: Ըստ Արտակարգ իրավիճակների նախարարության տվյալների, էպիկենտրոնային գոտում ստորգետնյա ցնցման ուժգնությունը կազմել է 6-7 բալ:

Երկրաշարժը զգացվել է Երևան քաղաքում՝ 5-6 բալ ուժգնությամբ, Արագածոտնի, Արարատի, Շիրակի, Արմավիրի, Վայոց Ձորի մարզերում՝ 3-4 բալ ուժգնությամբ:

Նույն օրը հայկական լրատվամիջոցներով սկսեց տեղեկություն շրջանառվել, որ ըստ ռուսական մամուլի՝ երկրաշարժի արդյունքում ավերվել է Արարատի լանջին գտնվող թուրքական բազան:

Ուսումնասիրելով այդ տեղեկությունը պարզեցինք, որ հորդվածի նկարները ոչ մի առնչություն չունեն փետրվարի 13-ի երկրաշարժի հետ. առաջին նկարում պատկերված է Էգեյան ծովում տեղի ունեցած երկրաշարժը: Երկրորդ նկարը, որը հայտնվել էր մամալում, բազմիցս օգտագործվել է տարբեր երկրներում տարբեր տարիներին տեղի ունեցած երկրաշարժների մասին նյութերում: Մեր գտած ամենավաղ նյութը, որտեղ օգտագործվում է այդ լուսանկարը, արված է հունիսի 30-ին 2017 թ.:
Մենք փորձեցինք ռուսական մամուլում գտնել որևէ տեղեկություն ավերված բազայի մասին, սակայն այդտեղ նույնպես ոչ մի հիշատակում չգտանք:

Այսպիսով, Արարատի լանջին թուրքական բազայի ավերվածությունների մասին տեղեկությունները կեղծ են:

Մանե Յահյեյան,
Արեգնազան կրթահամալիր
***10*-րդ դասարան**

ԱԶՆԱՎՈՒՐԸ 100 ԵՎՐՈ ԹՂԹԱԴՐԱՄԻ ՎՐԱ. ԿԵՂԾԻՔ

Bavnews -ը տեղեկացնում է, որ Ֆրանսիայում 100 եվրո թղթադրամ է շրջանառության մեջ դրվել Ազնավուրի պատկերով, մեջբերելով «Ազգային ժողովրդական բևեռ»-ի անդամ, կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանին,ով իր ֆեյսբուքյան էջում գրել էր.
«Ահա այսպիսի 100 եվրո թղթադրամ է շրջանառության մեջ դրվել Ֆրանսիայում՝ Ազնավուրի, Արարատի, Էջմիածնի և անգամ հայկական դրամի պատկերներով:

Թղթադրամի տեղադրված նկարը որոնելիս՝ մենք պարզեցինք, որ սա ընդամենը հուշանվեր է, որը կարելի է գնել eBay-ից:

Սոնա Կարապետյան,

ԱՄՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ «ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ» ՆՈՐՄԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՄՆ ներկայացուցիչների պալատը մտադիր է «գենդերային չեզոքության» մասին նորմեր ընդունել» ասում է Թերթ.am-ը: Մենք որոշեցինք ստուգել այդ տեղեկության իսկությունը:

Թերթ.am-ի հոդվածում ասվում է, որ ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատը մտադիր է նոր նորմեր սահմանել, որոնց նպատակն է հարգալից վերաբերմունք ցուցաբերել գենդերային բոլոր ինքնությունների նկատմամբ: Ըստ այդ հոդվածի «մայր», «հայր», «քույր», «եղբայր» և այլ այսպիսի բառեր առհասարակ գործածությունից դուրս կգան: Թերթ.am-ը որպես աղբյուր նշել է The Washington Times-ի հոդվածը, Թերթ.am-ի հոդվածի տեքստը այս հոդվածի տեքստի հայերեն թարգմանությունն է:
Այս հոդվածում իհարկե չկան ո՛չ հղումներ, ո՛չ էլ ապացույցներ, սակայն կարելի է շատ շուտ նկատել, որ արվել են ծաղրանք և հեգնանք պարունակող արտահայտություններ, որոնք Թերթ.am-ը ուղիղ իմաստով է ընկալել իր հոդվածում:

Փնտրելով այս նյութի վերաբերյալ այլ տեղ**եկություններ՝ մենք հանդիպեցինք Snopes կայքի այս հոդվածին, որի շնորհիվ պարզեցինք, որ իրականում այս բառերի վրա ոչ մի արգելք չի դրվելու, ընդամենը որպես հարգանք գենդերային բոլոր ինքնությունների նկատմամբ միայն Ներկայացուցիչների պալատի կանոնակարգում կօգտագործվեն չեզոք դերանուններ: Ոչ՛ քաղաքական գործիչները, ոչ՛ էլ քաղաքացիները չեն պարտադրվում օգտագործել չեզոք դերանուններ:**

Մանե Յահյեյան

ՏԱ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

20 Տարի
2001 - 2021
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Միասին Տեղեկատվության Ազատության Համար

foi@foi.am

+374 91 407836
+374 91 700 974

#ԱՆՎՃԱՐ_ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

տեղեկատվության ազատության ոլորտում

ԴԻՄԵՔ ՄԵԶ, եթե

- չգիտեք՝ ինչպես դիմել տեղեկություն ստանալու համար
- ստացել եք թերի կամ ոչ լիարժեք պատասխան
- խախտվել են տեղեկություն ստանալու ժամկետները
- պետական մարմինները մերժել են տրամադրել պահանջվող տեղեկությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

#ՎԻԴԵՈԲԼՈԳ

#ՖԵՅՔԱՔԱՂ 2

Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի հետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ն «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակում մեկնարկել են Ֆեյքաքաղ վիդեոբլոգների շարքը՝ մեդիափորձագետներ Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի մասնակցությամբ: Նախաձեռնության նպատակն է զարգացնել լրատվամիջոցների մեդիագրագիտությունը և երիտասարդության փաստերի ստուգման հմտությունները:

Ֆեյքաքաղ. #2. Ֆեյքերը սոցցանցերում

Հաճելի դիտում:
Կհանդիպենք հաջորդ ամիս

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Ղազար Փարպեցու 9բ, 27 ա
Հեռ.՝ +374 95 938363
Էլ. փոստ՝ info@mdi.am
www.mdi.am